ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

1567 23 FEB 2018 ժամ 15:20

« 19 » փետրվար 2018 թ No 438 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի N 347 որոշման 17-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը և հիմք ընդունելով «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0101016818 առ 07.02.2018թ. գրությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել թվով 1 դեղի գրանցման հավաստագրի վերաձևակերպումը՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Թոփչյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղի վերաձևակերպված գրանցման հավաստագրի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես վերաձևակերպված հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշել սույն հրամանի տրման օրը.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2018 թվականի փետրվարի 19 - ի

N 438 – Ա հրամանի

# ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՁԵԱԿԵՐՊՈՒՄ

| հ/հ | Առևտրային անվանումը | միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները | դեղաձևը | դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը) | արտադրող ֆիրման | երկիրը | գրանցման հավաստագրի իրավատեր | Բաց թողման կարգը | եզրակացու-թյան համարը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Վալիդոլ | մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում | դեղապատիճներ | 100մգ; (10) և (20/2x10/) բլիստերում | Մինսկինտերկապս ՈՒ.Զ., 26/3, Ինժեներնայա փ., 220075, Մինսկ | Բելառուս | Մինսկինտերկապս ՈՒ.Զ., 26, Ինժեներնայա փ., 220075, Մինսկ Բելառուս | ԱԴ | 17148 |